44-ՐԴ ՆԻՍՏ

11 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 9-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* Ներկա է խնամատարության մինիստրը:

Քննության է դրվում վերադարձող գաղթականների խնդիրը:

Խնամատարության մինիստր - Տալիս է բացատրություն ու տեղեկություններ առհասարակ գաղթականության, մասնավորապես նոր կցված վայրերը վերադարձող գաղթականների վիճակի մասին:

Ընդհանուր գաղթականության թիվը 600.000-ից ավել է: Խորհրդարանը որոշում ունի միայն 25 հազար գաղթականի նպաստ տալու, որպիսի որոշումը և որականացվել է իրոք: Մեծագույն մասը, ուրեմն, զուրկ է եղել նպաստից, անց է կացրել ու շարունակվում է անցկացնել իր օրերը սոված, մերկ ու բացօթյա: Այդ

պայմանների հետևանքով է, որ գաղթականության 80 տոկոսը հիվանդ է և մահանում է:

Խնդիրը նրանումն է, որ դժնդակ պայմաններ գաղթականության համար ստեղծվել է այն բանի համար, որ չեն եղել ու չկան զեմստվային ու այլ հասարակական կազմակերպություններ, պարենավորման բաժանմունքի պահեստները դատարկ են եղել, գյուղատնտեսական գործիքներ պատրաստելու համար գործարաններ չունենք, վառելիք չկա, բժշկական օգնություն չի եղել և բժշկական գործը բաժանված է գաղթականական մարմնից: Կառավարությունը չունի երթևեկության միջոցներ՝ անմիջապես իր օգնությունն ու աջակցությունը ցույց տալու. այսպես և մի շարք այլ անբարենպաստ պայմաններ ու հանգամանքներ: Կա 39 որբանոց 8 հազար որբով, դարձյալ անբարենպաստ պայմաններում:

Այնուհետև մինիստրը նկարագրում է Ղամարլու և Սուրմալու վերադարձող գաղթականության վիճակը, որն ըստ ամենայնի շատ ծանր է:

Վերոհիշյալ բոլոր թերությունների հանդեպ մինիստրն առաջադրում է իր ապագա գործունեության ծրագիրն ու ցանկությունները, որոնց հավանություն է տալիս խորհրդարանը միաձայն:

Առաջարկվում են բանաձևեր, անցնում է դաշնակցական ֆրակցիայինը, որը հետևյալն է. «Լսելով Հայաստանի հանրային խնամատարության մինիստրի զեկուցումը Սուրմալու և Ղամարլու վերադարձող գաղթականության դրության մասին, Հայաստանի Խորհրդարանը որոշեց հիշյալ շրջանները պառլամենտական մի-մի հանձնախումբ ուղարկել՝ տեղնուտեղը ծանոթանալու և խորհրդարանին զեկուցանելու համար»:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 5 հունվարի 1919թ.